

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ  
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**ԴԱՍԸՆԹԱՑ 1.2**

*ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ  
/քննության հարցերի պատասխաններ/*

ՆՈՅԵՄԲԵՐ 2020Թ.

## ԲԱՆԱԶԵՎԵՐ

Ռեգրեսիոն վերլուծություն

$$a = \frac{\sum y}{n} - \frac{b \sum x}{n}$$

$$b = \frac{n \sum xy - \sum x \sum y}{n \sum x^2 - (\sum x)^2}$$

$$r = \frac{n \sum xy - \sum x \sum y}{\sqrt{(n \sum x^2 - (\sum x)^2)(n \sum y^2 - (\sum y)^2)}}$$

$$\text{Պատվերի հոստի մալքանակ} = \sqrt{\frac{2C_0 D}{C_h}}$$

$$\text{Խմբաքանակի հոստի մալքանակ} = \sqrt{\frac{2C_0 D}{C_h \left(1 - \frac{D}{R}\right)}}$$

**ԲԱԺԻՆ Ա.**

**Բազմակի ընտրության հարցերի պատասխաններ**

*Յուրաքանչյուր հարցի արժեքը 2 միավոր է*

**1. Պատասխան Գ**

Քանի որ X նյութն օգտագործվում է ընկերության սովորական գործունեության ընթացքում, ապա պայմանագրի վրա ծախսելու դեպքում նրա պաշարները անմիջապես պետք է վերականգնվեն, այսինքն ձեռք բերվեն շուկայից 33 դոլարով: Ռելեվանտ ծախսը կկազմի  $800 \times 33 = 26.400$  դոլար:

**2. Պատասխան Դ**

Լուծում

Դրույքի շեղում	Արդյունավետության շեղում
Պլան $11000 \times 15 = 165.000$	Պլան $6500 \times 2 = 13000 \times 15 = 195.000$
Փաստացի՝ 186.000	Փաստացի $11000 \times 15 = 165.000$
Շեղում՝ 21000 Անբարենպաստ	Շեղում՝ 30000 Բարենպաստ

**3. Պատասխան Բ**

---

4. Պատասխան Բ Կորեյացիայի գործակիցն ընկած է  $-1 \div +1$  միջակայքում:

---

5. Պատասխան Դ  $120,000 : (60 + 2 \times 120) = 400$  Ա Արտադրանք,  $2 \times 400 = 800$ ՝ Բ արտադրանք

---

6. Պատասխան Բ  $4000 + 5000 - (12 \times 160) = 9000 - 1920 = 7080$

---

7. Պատասխան Ա Բարձր-ցածր մեթոդի կիրառում  $(30000 - 18000) : (7000 - 3000) = 3$

---

**8. Պատասխան Գ**

Մեկ մեքենա-ժամի արժեքը	$270,000 / 9000 = 30$
Պլանային վերադիր ծախսեր	$8900 \times 30 = 267,000$
Փաստացի վերադիր ծախսերի թերկլանում	$282,000 - 267,000 = 15,000$

**9. Պատասխան Ա**

Հաստատուն ծախսեր  $= 5,000 \times 2,400 = 12,000,000$  ՀՀ դրամ  
1 միավորի սահմանային շահույթ  $= 12,000 - 6,000 = 6,000$  ՀՀ դրամ  
 $6,000 \times$  վաճառքի քանակ  $- 12,000,000 = 8,400,000$   
Վաճառքի քանակ  $= 20,400,000 / 6,000 = 3,400$  հատ

---

**10. Պատասխան Գ**

Ավելացված հաստատուն ծախսեր  $= 12,000,000 \times 120\% = 14,400,000$  հազ. ՀՀ դրամ  
Ծախսաձածկման կետ  $= 14,400,000 / 6,000 = 2,400$  հատ  
Արտադրանքի նորմատիվային քանակ  $= 5,000$  հատ  
Ապահովության տիրույթը (միավորով)  $= 5,000 - 2,400 = 2,600$  հատ  
Ապահովության ինդեքսը (տոկոսով)  $= 2,600 / 5,000 = 52\%$

---

11. Պատասխան Բ  $EOQ=(2*3600*30,000/2400)^{1/2}=300$

---

12. Պատասխան Բ

---

13. Պատասխան Բ

	X	Y
1 աշխատաժամին ընկնող սահմանային շահույթ	$(14-10)/2=2$	$(24-12)/8=1.5$

Քանի որ X արտադրանքի 1 աշխատաժամին ընկնող սահմանային շահույթը ավելի մեծ է, քան Y արտադրանքինը, ապա անհրաժեշտ է ամբողջովին՝ 1,600 միավոր, արտադրել X արտադրանքի պահանջված քանակը, իսկ մնացած ռեսուրսների շրջանակում արտադրել Y արտադրանքը:

$6,000-1,600*2=2,800$

$2,800/8=350$  միավոր

---

14. Պատասխան Ա

Ամսվա սկզբում առկա անավարտ արտադրանքի ինքնարժեք	14,500 հազ. ՀՀ դրամ
Սկզբնական անավարտ արտադրանքի լրամշակման ծախսումներ	$400*35\%*16,000=2,240$ հազ. ՀՀ դրամ
Ամսվա ընթացքում նոր արտադրված արտադրանք	$(2,200-400)*18,000=32,400$ հազ. ՀՀ դրամ
Ընդհանուր ծախսումներ	49,140 հազ. ՀՀ դրամ

---

15. Պատասխան Բ

Քանի որ 75-ից վեր հաստատուն ծախսերը կրկնապատկվում են, մենք պետք է հաշվարկների համար վերցնենք այն քանակները, որոնց ծախսերը ունեն միևնույն վարքագիծը, այսինքն 62 և 51 միասին կամ 77 և 89 միասին:

I տարբերակ:

$(54,600-45,800)/(62-51) = 8800 / 11 = 800$  (սա մեկ միավորի փոփոխական ծախսն է)

Հաստատուն ծախսերը հավասար են  $54,600-(62*800)$  կամ  $45,800-(51*800)$ , այսինքն 5,000:

100 միավորի ընդհանուր ծախսը հավասար է  $5,000 \times 2 + 100 \times 800 = 90,000$

II տարբերակ:

$(81,200-71,600) / (89-77) = 9,600 / 12 = 800$  (սա մեկ միավորի փոփոխական ծախսն է)

Հաստատուն ծախսերը հավասար են  $81,200-(89 \times 800)$  կամ  $71,600-(77 \times 800)$ , այսինքն 10,000:

100 միավորի ընդհանուր ծախսը հավասար է  $10,000 + 100 \times 800 = 90,000$

---

16. Պատասխան: Բ

Պլանավորված կլանման դրույքը մեկ ժամի համար հավասար է նախատեսված վերադիր ծախսեր / նախատեսված աշխատաժամեր =  $\$ 168,000 / 140 000 = \$ 1.2$

---

17. Պատասխան Գ

Կլանման դրույքը կազմում է \$ 1.2 /տես նախորդ հարցը/

Կլանված /ինքնարժեքի մեջ ներառված/ վերադիրներ =  $130,000 \times \$ 1.2 = \$156,000$

Փաստացի վերադիրներ = \$ 187,200

Թերկլանում =  $\$156,000 - \$187,200 = \$31,200$

---

18. Պատասխան Ա

Արտադրամաս 1 =  $4000 \times 1 (P) + 7000 \times 2 (Q) = 18000$  ժամ

Մեկ ժամվա արժեքը՝  $\$54,000 / 18000$  ժամ = \$3/ժամ

Արտադրամաս 2 =  $4000 \times 2 (P) + 7000 \times 2 (Q) = 22000$  ժամ

Մեկ ժամվա արժեքը՝  $\$88,000 / 22000$  ժամ = \$4/ժամ

$P = 1 \times \$3 + 2 \times \$4 = \$11$

---

19. Պատասխան Բ

Աշխատակիցների միջին թվաքանակ =  $(1200 + 1400) / 2 = 1300$

Հոսունության մակարդակը =  $250 / 1300 = 19.2\%$

---

20. Պատասխան Ա

A: Ակնկալվող ելքը պետք է լիներ  $50000 \times 0.91 = 45,500$ , բայց եղել է 45,000՝ կորուստ:

B: Ակնկալվող ելքը պետք է լիներ  $75000 \times 0.97 = 72,750$ , բայց եղել է 75,000՝ օգուտ:

---

21. Պատասխան Բ

Պաշարների վերջնական մակարդակը:  $4\ 800 + 31\ 000 - 27\ 200 = 8\ 600$  միավոր:

Պաշարների աճ:  $8\ 600 - 4\ 800 = 3\ 800$  միավորով:

Այս երկու մեթոդներով հաշվարկված շահույթի տարբերությունը կլինի  $3\ 800 \times 3,5 \times 85 = 1,130,500$  դրամ:

Հետևաբար շահույթը՝  $2,330,000 - 1,130,500 = 1,199,500$  դրամ:

---

22. Պատասխան Դ

$25200 \times 60 + 9480 \times 120 = 1,512,000 + 1,137,600 = 2,649,600$  դրամ:

C արտադրանք =>  $1,512,000 / 2,649,600 \times 420,000 = 239,674$  դրամ:

---

23. Պատասխան Դ

---

24. Պատասխան Դ

X:  $\$60,000 / \$30,000 = 200\%$  Y:  $\$50,000 / \$10,000$  ժամ = \$5.00

---

25. Պատասխան Գ:

Եթե կազմակերպությունը չի աշխատում իր ամբողջ հզորությամբ, ապա լրացուցիչ միավորների վաճառքի գինը պետք է սահմանվի, հիմնվելով միայն սահմանային ինքնարժեքի վրա: Այսպես.

Նյութածախս:  $600 \times 14\ 000 / 7000 = \$ 1,200$

Աշխատանքային ծախսեր:  $600 \times 7,000 / 7000 = \$600$

Հաստատուն վերադիրներ: \$ 0

Իրացման ծախսեր: փոփոխական  $600 \times 0.4 \times 8,000 / 7,000 = \$274$ , հաստատուն \$ 0

Ընդամենը:  $1,200 + 600 + 274 = \$2,074$

$X - 2,074 = 2,400$

$X = \$4,474$

Մեկ միավորի վաճառքի գին =  $4,474 / 600 = \$ 7,46$ :

**ԲԱԺԻՆ Բ. Խնդիրների պատասխաններ.**

**ԽՆԴԻՐ 1: ԼՈՒԾՈՒՄ**

**Գնահատման չափանիշներ**

Խնդիր 1	
Իրացման գնային շեղում	1.5
Ուղղակի նյութական ծախսումների շեղում	1.5
Ուղղակի նյութերի օգտագործման շեղում	1.5
Ուղղակի աշխատանքային ծախսումների շեղում	1.5
Ուղղակի աշխատաժամանակի շեղում	1.5
Փոխկապակցման հաշվետվություն	2.5
<b>Ընդամենը</b>	<b>10 միավոր</b>

**A. *Իրացման գնային շեղում***

Փաստացի վաճառված քանակը՝ 9000-ը պետք է ունենար  $9000 \times 66 = \$594,000$  հասույթ, բայց ունեցել է  $\$601,500$ : Արդյունքում  $\$7,500$  բարենպաստ շեղում:

Ընդամենը իրացման շեղումը =  $\$ +7,500$  բարենպաստ շեղում:

**B. *Ուղղակի նյութական ծախսումների շեղում***

Փաստացի ձեռքբերումը՝ 46,200 կիլոգրամը պետք է արժենար  $46,200 \times \$6 = \$277,200$ , բայց արժեցել է  $\$271,800$ : Արդյունքում  $\$5,400$  բարենպաստ շեղում:

**C. *Ուղղակի նյութերի օգտագործման շեղում***

Փաստացի արտադրության քանակի՝ 9000-ի համար պետք է սպառեինք  $9000 \times 5$  կգ = 45,000 կգ նյութ, բայց սպառվել է 46,200 կիլոգրամ: Արդյունքում  $(45,000 - 46,200) \times 6\$ = \underline{7,200}$  անբարենպաստ շեղում:

Ընդամենը նյութածախսի շեղումը =  $+\$5,400\$ - \$7,200 = \underline{\$1,800}$  անբարենպաստ շեղում:

**D. *Ուղղակի աշխատանքային ծախսումների շեղում***

Փաստացի աշխատած 18,600 ժամը պետք է արժենար  $18,600 \times 5\$ = \$93,000$ , բայց արժեցել է  $\$91,700$ : Արդյունքում  $93,000 - 91,700 = \underline{\$1,300}$  բարենպաստ շեղում:

**E. *Ուղղակի աշխատաժամանակի շեղում***

Փաստացի արտադրության 9000 միավորի համար պետք է ծախսեինք  $9000 \times 2 = 18000$  ժամ, բայց ծախսել ենք 18,600 ժամ՝ չափված ստանդարտ գնով: Արդյունքում  $(18,000 - 18,600) \times 5\$ = \underline{\$3,000}$  անբարենպաստ շեղում:

Ընդամենը աշխատանքի մասով ունենք +1,300-3,000= -\$1,700 անբարենպաստ շեղում:

Այժմ կարող ենք կառուցել փոխկապակցման հաշվետվություն:

Պլանավորվող շահույթ	9000 x 26	234,000
Վաճառքի շեղում	7,500	7,500
Փաստացի վաճառքի նորմատիվային շահույթ		241,500
Նյութաձախսի շեղում	5,400 -7,200	-1800
Աշխատանքի շեղում	1,300 -3,000	-1,700
Փաստացի շահույթ*		238,000

**\*Ստուգում**

$$\text{Փաստացի շահույթը} = 601,500 - 271,800 - 91,700 = 238,000$$

**ԽՆԴԻՐ 2. ԼՈՒԾՈՒՄ**

**Գնահատման չափանիշներ**

<b>Խնդիր 2:</b>	
Սահմանային շահույթի հաշվարկ յուրաքանչյուր արտադրատեսակի համար	Յուրաքանչյուր արտադրատեսակի համար 1 միավոր, ընդամենը 3 միավոր
Սահմանային շահույթի հաշվարկ 1 միավոր սահմանափակող գործոնի հաշվարկով	Յուրաքանչյուր արտադրատեսակի համար 1 միավոր, ընդամենը 3 միավոր
Արտադրատեսակների դասակարգում	1.5 միավոր
Արտադրատեսակների քանակների հաշվարկ	2.5 միավոր
<b>Ընդամենը</b>	<b>10 միավոր</b>

Նախ անհրաժեշտ է պարզել արդյոք աշխատաժամանակը մեզ համար սահմանափակող գործոն է, թե ոչ: Այսպես մեր պահանջարկը բավարարելու համար մեզ անհրաժեշտ է  $700 \times 0.5 + 500 \times 1,5 + 600 \times 1 = 350 + 750 + 600 = 1700$ , իսկ մենք ունենք ընդամենը  $8 \times 8 \times 25 = 1600$ :

Հետևաբար անհրաժեշտ է հրաժարվել արտադրատեսակներից որևէ մեկի որոշակի քանակից, կամ այդ արտադրատեսակից ընդհանրապես:

Այս նպատակով նախ հաշվարկում ենք, թե որքան սահմանային շահույթ է վաստակում արտադրատեսակներից յուրաքանչյուրը 1 միավոր սահմանափակող գործոնի կտրվածքով, այսինքն՝ 1 ժամում: Այսպես.

<b>Արտադրատեսակ</b>	<b>A</b>	<b>B</b>	<b>C</b>
Վաճառքի գին, դրամ	2400	3800	3250
Ուղղակի նյութածախս, դրամ	1000	850	950
Ուղղակի աշխատուժ, դրամ	500	1500	1000
Այլ փոփոխական վերադիրներ, դրամ	150	450	300
Փափախական ինքնարժեք, դրամ	1650	2800	2250
Սահմանային շահույթ, դրամ	750	1000	1000
1 միավորի պատրաստման համար անհրաժեշտ t, ժամ	0.5	1.5	1
1 ժամվա սահմանային շահույթը	1500	667	1000
Դասակարգում	I	III	II

Հետևաբար նախ պետք է արտադրել A արտադրատեսակի ամբողջ պահանջարկը, ապա D և միայն վերջում C:

Այսպես.

<i>Դասակարգումը</i>	<i>Արտադրատեսակը</i>	<i>Պահանջարկը</i>	<i>Անհրաժեշտ ժամանակը</i>	<i>Ընդամենը ծախսված</i>	<i>Դեռ հասանելի</i>
I	A	700	0.5	$700 \times 0.5 = 350$	$1600 - 350 = 1250$ ծամ
II	C	500	1	$500 \times 1 = 500$	$1250 - 500 = 750$ ծամ
III	B	600	1.5	$750 \text{ ծամ} / 1.5 = 500$ միավոր	0

**Խնդիր 3 ԼՈՒԾՈՒՄ**

**Գնահատման չափանիշներ**

	Խնդիր 3		
ա-1	միավորի վաճառքի գին, փոփոխուն ծախսի և փոփոխուն վաճառքի ծախսերի որոշում	1	
	1 միավորի սահմանային շահույթի և ընդամենը սահմանային շահույթի որոշում	1	
ա-2	պլանային գուտ շահույթի հաշվարկ	2	
	Ընդամենը ա կետ		4
բ	Հաջորդ տարվա ծախսաձածկման կետի հաշվարկ		3
գ	Բացատրել շահույթի տարբեր մեծությունների առաջացման պատճառները կախված ծախսերը սահմանային և լրիվ կլանման մեթոդներով հաշվառելու հետ	2	
	մեկնաբանել, թե որ դեպքում երկու մեթոդներով հաշվարկված շահույթները կարող են լինել իրար հավասար	1	
	Ընդամենը գ կետ		3
<b>Ընդամենը</b>			<b>10 միավոր</b>

ա.1 1 միավորի վաճառքի գին  $15,600,000/40,000=390$ դ.

1 միավորի փոփոխուն ծախսը,  $9,000,000/50,000=180$ դ

1 միավորի փոփոխուն վաճառքի ծախսեր  $1,100.000/40.000=27.5$ դ.

1 միավորի սահմանային շահույթը  $182.5$ դ. ( $390-180-27,5$ )

ընդամենը սահմանային շահույթը  $40.000 \times 182.5 = 7,300,000$

ա.2 պլանային գուտ շահույթի հաշվարկ՝ սահմանային ծախսերի մեթոդով (1-ին եղանակ)

ընդամենը սահմանային շահույթ՝ 7,300,000

հաստատուն արտադրական ծախսեր (4,800,000)

վարչական ծախսեր (960,000)

գուտ շահույթ 1,540,000

ա.2 պլանային գուտ շահույթի հաշվարկ՝ ինքնարժեքի կալկուլյացման սահմանային մեթոդով (2-րդ եղանակ)

գուտ շահույթը՝ ինքնարժեքը հաշվարկված ծախսերի լրիվ կլանման մեթոդով 2,500,000 դոլար

հաստատուն ծախսերը պաշարների մնացորդում (960,000) դոլար

( $4,800/50,000=96$   $96 \times 10,000=960,000$ )

գուտ շահույթը՝ հաշվարկված ինքնարժեքի կալկուլյացման սահմանային մեթոդով 1,540,000 դոլար

բ. Հաջորդ տարվա ծախսաձածկման կետի հաշվարկ.

միավորների թիվը ծախսաձածկման կետում =  
= հաստատուն ծախսերի ընդհանուր գումար/ մեկ միավորի սահմանային շահույթ  
 $7,300,000:182.5=40,000$  միավոր

գ. Կլանման մեթոդով և սահմանային մեթոդով հաշվարկված շահույթների միջև տարբերություն է առաջանում, երբ պաշարների մնացորդների փոփոխություն է առաջանում, քանի որ լրիվ կլանման մեթոդի դեպքում հաստատուն ծախսերի մի մասը ներառվում է պաշարների ինքնարժեքում: Շահույթի տարբերություն չի առաջանա, եթե չկա պաշարների շարժ, այսինքն սկզբնական և վերջնական մնացորդների փոփոխություն:

**Խնդիր 4 ԼՈՒՄՈՒՄ**

Գնահատման չափանիշներ

<b>Խնդիր 4:</b>	
Ա	
ՊՕՔ հաշվարկ	2
Առկա համակարգով ընդամենը ծախսեր	1
Զեղչային համակարգով ընդամենը ծախսեր	1
	<b>4</b>
Բ	
Պատվերի կրկնման մակարդակը	1
Պաշարների մինիմալ մակարդակ	1
Պաշարների մաքսիմալ մակարդակ	1
	<b>3</b>
Գ	
Պաշարների համալրման երկգամբյուղային (երկբունկերային) համակարգի նկարագրություն:	<b>3</b>
<b>Ընդամենը</b>	<b>10 միավոր</b>

Ա) Ներկա պայմաններում  $EOQ = \sqrt{(2 \cdot D \cdot C_o) / (C \cdot h)} = \sqrt{2 \times 4 \times 12,100 \times 300 / 30 \times 5\%} =$

$\sqrt{(29,040,000 / 1.5)} = \sqrt{19,360,000} = 4400$  միավոր:

Հետևաբար ընդհանուր նյութածախսի համար կատարված ծախսերը հետևյալն են.

Գնումներ :  $4 \times 12,100 \times 30 = \$1,452,000$

Պատվեր:  $4 \times 12,100 / 4400 = 11$ , այսինքն պետք է կատարվի 11 պատվեր, հետևաբար  $11 \times 300 = \$3,300$

Պահպանում:  $4400 / 2 \times 30 \times 0.05 = \$3,300$

**Ընդամենը: \$1,458,600:**

Զեղչի օգտագործման պարագայում:

Գնումներ :  $4 \times 12,100 \times 30 \times 0.97 = \$1,408,440$

Պատվեր:  $4 \times 12,100 / 5000 = 9.68$ , այսինքն պետք է կատարվի 10 պատվեր, հետևաբար  $10 \times 300 = \$3,000$

Պահպանում:  $5000 / 2 \times 30 \times 0.97 \times 0.05 = \$3,637.50$

**Ընդամենը: \$1,415,077.50:**

Ջեղի կիրառման արդյունքում խնայում ենք  $1,458,600 - 1,415,077.50 = \$43,522.50$ : Այսինքն զեղչը նպատակահարմար է:

Բ)

**Պատվերի կրկնման մակարդակը** = Պատվերի կատարման մաքսիմալ ժամանակահատված  $\times$  տվյալ ժամանակահատվածում սպասվելիք մաքսիմալ պահանջարկ =  $600 \times 8 = 4800$  միավոր:

**Մինիմալ մակարդակը** = Պատվերի կրկնման մակարդակ – (Պատվերի կատարման միջին ժամանակահատված  $\times$  տվյալ ժամանակահատվածում սպասվելիք միջին պահանջարկ) =  $4800 - ((4+8)/2 \times (300+600)/2) = 4800 - (6 \times 450) = 4800 - 2700 = 2100$  միավոր:

**Մաքսիմալ մակարդակը** = Պատվերի կրկնման մակարդակ + Պատվերի օպտիմալ քանակ – (Պատվերի կատարման մինիմալ ժամանակահատված  $\times$  տվյալ ժամանակահատվածում սպասվելիք մինիմալ պահանջարկ) =  $2800 + 1600 - (4 \times 300) = 4800 + 1600 - 1200 = 5200$  միավոր:

**Սահմանում - երկբունկերային համակարգն** օգտագործում է երկու զետեղարան՝ A և B:

Պաշարները սպառվում են A բունկերից և պատվեր է կատարվում, երբ A բունկերը դատարկվում է: Պատվերի կատարման ընթացքում օգտագործվում են B բունկերի պաշարները: Բունկեր B-ի պաշարների ստանդարտ քանակը համարժեք է պատվերի իրականացման ժամանակահատվածում պաշարների պահանջարկի և բուֆերային մակարդակի հանրագումարին:

Երբ նոր պատվերը մուտքագրվում է, B-ն համալրվում է մինչև իր ստանդարտ մակարդակը, իսկ մուտքագրման մնացորդային մասը փոխանցվում է A բունկերին: Այնուհետև պաշարների ծախսն արդեն սկսում է իրականացվել A բունկերից և այդպես՝ շարունակ:

Որոշ կազմակերպությունների կողմից նույն մոտեցումն է ցուցաբերվում մեկ բունկերի օգտագործման դեպքում: Ջետեղարանի ներսում կարմիր գույնով նշագծվում է պատվերի կրկնման մակարդակը, և երբ պաշարների նվազող մնացորդը հասնում է գիծը, ապա պատվեր է իրականացվում: Հետևաբար, զետեղարանի նշագծից ներքև ընկած պաշարները կներկայացվեն որպես B բունկեր, իսկ նշագծից վերև ընկած պաշարները՝ որպես A բունկեր:

Պաշարների ծախսի վերահսկողության տեսանկյունից պաշարների կառավարման համակարգի բոլոր ծախսերը պետք է հաշվի առնվեն: Երկբունկերային համակարգով վերահսկողության ծախսերը կարող են բարձր լինել, այդ պատճառով առավել խնայողական է համարվում պարբերական վերահսկողության համակարգը:

**Խնդիր 5 – ԼՈՒԾՈՒՄ**

Քայլ 1 – Միավորների ֆիզիկական հոսքը

Սկզբն. անավ. արտադր	+	Ստացված միավորներ	=	Ավարտված միավորներ	+	Վերջն. անավ. արտադր.
500		4.500		4.400		600

Ընդ որում, ավարտված միավորները կազմված են հետևյալ կերպ.

<i>Ավարտված սկզբն. անավ. արտադր.</i>		<i>Սկսած և վերջացրած</i>		
500	+	3.900	=	4.400

Լուծում ենք միջին կշռված արժեքի մեթոդով

Քայլ 2				Քայլ 3			
	Ավարտված	Վերջն. անավարտ արտադր.	Ընդամենը համարժեք միավորներ	Ծախսեր (նախորդ ժամանակաշրջան)	Ծախսեր (ընթացիկ ամիս)	Ծախսեր (համատեղ)	1 համ. միավ. արժեք
					\$	\$	\$
Նախորդ պրոցես	4.400	100% 600	5.000	22.000	243.000	265.000	53,0
Նյութեր ավելացված	4.400	70% 420	4.820	21.180	287.000	308.480	64,0
Աշխատանք և վերադիրներ	4.400	20% 120	4.520	12.480	367.200	379.680	84,0
				55.660	897.500	953.160	201

Քայլ 4 – Ավարտված միավորների արժեքը

$4.400 \times \$201 = \$884.400$

Վերջնական անավարտ արտադրության արժեքը

	\$	
Նախորդ պրոցես	600 x \$53	31.800
Նյութեր	420 x \$64	26.880

Աշխատանք և այլն	120 x \$84	10.080
		-----
		68.760
		-----

(Ստուգում՝ \$55.660 + \$897.500 = \$884.400 + \$68.760)

Պրոցեսի հաշիվ					
Միավոր			Միավոր		
		\$			\$
Սզբնական անավարտ	500	55.660	Պատրաստի արտադրանք	4.400	884.400
Նախորդ պրոցեսից ստացված	4.500	243.000	Վերջնական անավարտ	600	68.760
Ավելացված նյութեր		287.300			
Աշխատանք և վերադիրներ		367.200			
	5.000	953.160		5.000	953.160

Գնահատման չափանիշներ

Խնդիր 5	
Միավորների ֆիզիկական հոսքի հաշվարկ	1
Համարժեք միավորների հաշվարկ (յուրաքանչյուրը 2 միավոր)	6
Պատրաստի արտադրանքի հաշվարկ	1
Վերջնական անավարտ արտադրանքի հաշվարկ	1
Պրոցեսի հաշվի կառուցում	1
<b>Ընդամենը</b>	<b>10 միավոր</b>